Եվրոպայի խորհուրդ

Մարդու իրավունքների
եվրոպական կոնվենցիա

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

ուսումնական ձեռնարկ

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մեր իրավունքները, մեր ազատությունները

Ձեռնարկ ուսուցիչների համար

«Ես համարում եմ, որ շատ դժվար է որոշել, թե մարդու իրավունքների այս հասկացությանը ինչպես կարող է տրվել իրական և որոշակի բովանդակություն: Իմ կարծիքով, լուծումը գտնվում է քաղաքացիական հասարակության գաղափարի մեջ: […] Իրականում, քաղաքացիական հասարակությունը՝ դա հանրային գործերին մասնակցող քաղաքացին է, ով գիտի իր իրավունքները և այն, թե ինչպես է պետք պայքարել դրանց համար»:

Բրոնիսլավ Գերեմեկ, Եվրոպայի խորհուրդ, 2007թ.*

Մենք պետք է մշտապես աչալուրջ լինենք մարդու իրավունքների պահպանման նկատմամբ, քանի որ դրանք կարող են շատ արագ խախտվել Եվրոպայում և այլուր:

Մարդու իրավունքները յուրաքանչյուրի գործն է և դա հատկապես վերաբերում է երիտասարդներին. ուսուցիչները կենսական դերակատարում ունեն այդ ուղերձը նրանց հասցնելու գործում:

Որպեսզի երիտասարդները ի վիճակի լինեն կառուցել մարդու իրավունքների վրա հիմնված հասարակություն, նրանց համար պետք է հասնակալի լինեն այն մեխանիզմները, որոնց միջոցով այդ իրավունքներն իմաստալից են դառնում, մասնավորապես այն միջազգային պայմանագիրը, որի համաձայն Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները հանձն են առել պահպանել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ):**

Այս ուսուցողական նյութերը, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն, գործուն միջոց են օգնելու համար ուսուցիչներին իրազեկել իրենց աշակերտներին մարդու իրավունքների մասին:

Տեսական հատվածը պարզեցված կերպով նկարագրում է Կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեությունը: Այն նաև բացատրում է, թե ինչով է զբաղվում Եվրոպայի խորհուրդը: Ինը ուսուցողական թերթիկները, որոնցից յուրաքանչյուրի ուշադրության կենտրոնում է գտնվում Կոնվենցիայի որոշակի մի հոդված, կազմված են այնպես, որ աշակերտներին տեղիք են տալիս խորհելու այն իրավունքների մասին, որոնք պետք է երաշխավորված լինեն ժողովրդավարական հասարակությունում:

Գործնական հատվածն առաջարկում է մարդու իրավունքների հետ կապված տարբեր վերլուծական, հետազոտական և քննարկման ենթակա վարժություններ և գործողություններ: Տարատեսակ պարզեցված դատական գործերի ուսումնասիրումը աշակերտներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու իրավական հարցերի հետ և հասկանալու, թե ինչպես է աշխատում Դատարանը:

Այս փաթեթում պարունակվող ուսուցողական նյութերը երիտասարդներին հնարավորություն կտան իրենց ուսուցիչների օգնությամբ, Եվրոպայում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին գործնական գիտելիքներ ձեռք բերելու հարցում ունենալ ավելի լայն հնարավորություններ:

**Բրոնիսլավ Գերեմեկ, Եվրոպայի խորհրդի դերը աշխարհամասի միավորման գործում, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 21-ը փետրվարի 2007թ: Հասանելի է՝ www.ena.lu - հասցեում:*

Բովանդակություն

ՄԻԵԿ-ի ուսումնասիրությունը

1 Մարդու իրավունքները Եվրոպայի խորհրդի առանցքն է

2 Կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ուշադրության կենտրոնում

3 Ինչպես է Դատարանն աշխատում

4 Ինչպես է գործը քննվում

5 ՄԻԵԿ-ի պարզեցված տարբերակը

6 Դիտարկում ենք հոդված 2-ը և 3-ը

7 Դիտարկում ենք հոդված 4-ը և 5-ը

8 Դիտարկում ենք հոդված 8-ը և 9-ը

9 Դիտարկում ենք հոդված 10-ը և 11-ը

10 Դիտարկում ենք հոդված 14-ը

Գործնական պարապմունքներ

1 Իմ երկիրը և ՄԻԵԿ-ը

2 Գործի ուսումնասիրում

3 Գործի ուսումնասիրում

4 Գործի ուսումնասիրում

5 Վիկտորինա

6 Ոչ միայն ՄԻԵԿ-ը

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մարդու իրավունքները
Եվրոպայի խորհրդի առանցքն է

Եվրոպայի խորհուրդն իր տեսակի մեջ միակ կազմակերպությունն է

Եվրոպայի խորհրդի հիմնական նպատակներն են.

- մարդու իրավունքների, բազմակարծիք ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությունը
- Եվրոպայի մշակութային ինքնության և բազմազանության գիտակցման և զարգացման խրախուսումը
- եվրոպական հասարակության առջև կանգնած ընդհանուր խնդիրների լուծման որոնումը. խտրականություն ազգային փոքրամասնությունների նկատմամբ, այլատյացություն, անհանդուրժողականություն, կենսաէթիկա և կլոնավորում, ահաբեկչություն, մարդկանց թրաֆիքինգ, կազմակերպված հանցագործություն և կոռուպցիա, կիբերհանցագործություն և բռնություն երեխաների նկատմամբ
- քաղաքական, օրենսդրական և սահմանադրական բարեփոխումների միջոցով Եվրոպայում ժողովրդավարական կայունության ամրապնդումը

Այս նպատակներին հասնելու համար Եվրոպայի խորհրդի կազմում կան հետևյալ մարմինները

- Նախարարների կոմիտե՝ դիրեկտիվ մարմին, որտեղ ներկայացված են անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները կամ Ստրասբուրգում նրանց մշտական ներկայացուցիչները
- Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ)՝ խորհրդակցական մարմին, որի անդամները նշանակվում են ազգային խորհրդարանների կողմից: Բաղկացած է 318 անդամներից և նույնքան էլ տեղակալներից
- Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրես՝ տեղական և տարածաշրջանային իշխանությունները ներկայացնող խորհրդակցական մարմին
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ դատական մարմին, որն ապահովում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքները իր իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար
- Մարդու իրավունքների հանձնակատար՝ անկախ պաշտոնյա, ով պատասխանատու է անդամ պետություններում ուսուցման, իրազեկման և հարգանքի խրախուսման համար մարդու իրավունքների ասպարեզում
- ՄՈԿԿ-ի համաժողով. Եվրոպայի խորհուրդը բաց է երկխոսության համար ավելի քան 400 միջազգային ոչ-կառավարական կազմակերպությունների համար (ՄՈԿԿ-ներ), որոնց շնորհվել է մասնակցային կարգավիճակ
- Գլխավոր քարտուղար՝ ընտրվում է ԵԽԽՎ-ի կողմից հինգ տարի ժամկետով որպես կազմակերպության ղեկավար: Նա պատասխանատու է ռազմավարական պլանավորման, Խորհրդի աշխատանքային ծրագրի ղեկավարման և բյուջեի տնօրինման համար և իրականացնում է Կազմակերպության ամենօրյա կառավարման վերահսկողություն
- Քարտուղարություն՝ աշխատակազմի ավելի քան 2000 անդամներ բոլոր 47 անդամ պետություններից աշխատում են Խորհրդի Ստրասբուրգում (Ֆրանսիա) գտնվող կենտրոնական մարմիններում կամ Եվրոպայով մեկ սփռված տարբեր գրասենյակներում:

www.coe.int

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մարդու իրավունքները
Եվրոպայի խորհրդի առանցքն է

Մեծ Եվրոպա

Ռեյկյավիկից մինչև Վլադիվոստոկ

Եվրոպայի խորհուրդը հիմնվել է 1949թ 10-ը պետությունների կողմից և հանդիսանում է միջազգային կազմակերպություն, որի կենտրոնական մարմինները գտնվում են Ստրասբուրգում (Ֆրանսիա):

Այսօր նրա կազմում կա 47 անդամ պետություն, որ ներկայացնում են 800 միլիոն մարդ:

Հիմնադիր անդամներ
(5-ը մայիսի 1949թ)

- Բելգիա
- Դանիա
- Ֆրանսիա
- Իռլանդիա
- Իտալիա
- Լյուքսեմբուրգ
- Նորվեգիա
- Նիդեռլանդներ
- Միացյալ Թագավորություն
- Շվեդիա

Մյուս անդամ պետությունները
(իրենց անդամակցման կարգով)

- Հունաստան (1949)
- Թուրքիա (1949)
- Իսլանդիա (1950)
- Գերմանիա (1950)
- Ավստրիա (1956)
- Կիպրոս (1961)
- Շվեյցարիա (1963)
- Մալթա (1965)
- Պորտուգալիա (1976)
- Իսպանիա (1977)
- Լիխտենշտեյն (1978)
- Սան Մարինո (1988)
- Ֆինլանդիա (1989)
- Հունգարիա (1990)
- Լեհաստան (1991)
- Բուլղարիա (1992)
- Էստոնիա (1993)
- Լիտվա (1993)
- Սլովենիա (1993)
- Չեխիայի Հանրապետություն (1993)
- Սլովակիա (1993)
- Ռումինիա (1993)
- Անդորրա (1994)
- Լատվիա (1995)
- Ալբանիա (1995)
- Մոլդովայի Հանրապետություն (1995)
- «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն» (1995)
- Ուկրաինա (1995)
- Ռուսաստանի Դաշնություն (1996)
- Խորվաթիա (1996)
- Վրաստան (1999)
- Հայաստան (2001)
- Ադրբեջան (2001)
- Բոսնիա և Հերցեգովինա (2002)
- Սերբիա (2003)
- Մոնակո (2004)
- Մոնտենեգրո (2007)

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ուշադրության կենտրոնում Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան է

Ինչ է ՄԻԵԿ-ը

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը

Գիտեք դուք արդյոք

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան անմիջականորեն հիմնված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի վրա, որն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) ***միջազգային պայմանագիր*** է, որը կնքվել է 1950թ և ուժի մեջ մտել 1953-ին: Դա Եվրոպայի խորհրդի առաջին կոնվենցիան է, որը զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ: Պետությունները պարտավոր են վավերացնել այս Կոնվենցիան Կազմակերպությանը միանալու համար:

Կոնվենցիան **պաշտպանում է հետևյալ իրավունքները՝**

- կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը
- հարգանք անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ
- արտահայտվելու ազատության իրավունքը
- մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը
- ընտրելու և ընտրվելու իրավունքը
- քաղաքացիական և քրեական գործերում արդար դատաքննության իրավունքը
- սեփականությունից և ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքը

Ի թիվս այլոց այն արգելում է՝

- խոշտանգումները կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը
- ստրկությունը և հարկադիր աշխատանքը
- կամայական և անօրինական կալանքը
- խտրականությունը՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներից և ազատություններից օգտվելու նկատմամբ
- պետության քաղաքացի հանդիսացող անձանց վտարումը կամ նրանց երկիր մուտք գործելու մերժումը
- մահապատիժը
- օտարերկրացիների կոլեկտիվ վտարումը

1950թ ի վեր Կոնվենցիան ենթարկվել է զանազան փոփոխությունների և տեղիք տվել Եվրոպայի խորհրդի բազմաթիվ այլ կոնվենցիաների ստեղծմանը: Այն կազմված է մի շարք հոդվածներից և տարիների ընթացքում արձանագրությունների միջոցով նոր իրավունքներ են ավելացել Կոնվենցիային: Դատարանի նախադեպային իրավունքը Կոնվենցիան դարձրել է «կենդանի օրգանիզմ», որն ունակ է հարմարվելու մեր հասարակություններում տեղ գտնող փոփոխություններին:

Միջազգային պայմանագիր

Համաձայնագիր պետությունների միջև, որը նախատեսում է իրավական հարցերի կարգավորում նրանց փոխհարաբերություններում:

Կոնվենցիա

Կոնվենցիան՝ դա իրավական համաձայնագիր է երկու կամ ավելի պետությունների միջև: Սկզբում պետություններին առաջարկվում է ստորագրել կոնվենցիան, ինչը ցույց կտա, որ նրանք ցանկանում են հետևել այն ամենին, ինչ այնտեղ արձանագրված է, այնուհետև, երբ նրանք վստահ կլինեն, որ կարող են դրանք իրականություն դարձնել, նրանք կարող են վավերացնել այն: Դա կնշանակի, որ նրանք իրենց վրա պարտավորություն են վերցնում կատարել դրա պահանջներն ու ցուցումները:

Կոնվենցիային կից արձանագրություն

Կոնվենցիային կից արձանագրությունը դա մի տեքստ է, որը մեկ կամ ավելի իրավունքներ է ավելացնում Կոնվենցիայի սկզբնական բովանդակությանը, կամ ուղղումներ մտցնում նրա որոշ դրույթների մեջ: Այն արձանագրությունները, որոնք իրավունքներ են ավելացնում Կոնվենցիային պարտադիր են միայն դրանք ստորագրած և վավերացրած պետությունների համար: Մինչ օրս ընդունվել է ՄԻԵԿ-ին կից 14 լրացուցիչ արձանագրություն:

www.human-rights-convention.org

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ուշադրության կենտրոնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան է

Գիտե՞ք դուք արդյոք

Եվրոպան միակ աշխարհամասը չէ, որտեղ կա մարդու իրավունքների դատական պաշտպանություն: Կա ևս երկու տարածաշրջանային դատարան. Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը և Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան դատարանը: 2008թ նշելու համար Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-րդ տարեդարձը երեք տարածաշրջանային դատարանները հանդիպեցին Ստրասբուրգում կայացած սեմինարի ժամանակ: Իր ելույթում Ժան-Պոլ Կոստան (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին նախագահը) ասաց. «Ինչը կարող է մարդու իրավունքների համընդհանուր բնույթի ավելի լավ վկայությունը լինել»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը

Ժողովրդավարության և օրենքի գերակայության երաշխավորը

1959թ ստեղծված Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի դատական մարմին է, որն ապահովում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքները պայմանավորվող պետության իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար: 1998թ նոյեմբերի 1-ից սկսած գործում է միասնական Դատարան, որի մշտական նստավայրն է Ստրասբուրգը (Ֆրանսիա):

Դատարանի դատավորների թիվը նույնն է, ինչ և Կոնվենցիային անդամագրված պետությունների թիվը: Դատավորները լիովին անկախ են, չեն ներկայացնում իրենց երկիրը և ընտրվում են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից:

Իր գոյության 50 տարիների ընթացքում Դատարանը կայացրել է ավելի քան 10000 ***վճիռ***: Այդ վճիռները պարտադիր են համապատասխան պետությունների համար և պահանջում են նրանցից վերացնել խախտումների հետևանքները դիմողների համար և փոփոխել իրենց օրենսդրությունը և գործելակերպը բազմաթիվ ոլորտներում՝ Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո: Կոնվենցիան Դատարանի նախադեպային իրավունքի շնորհիվ զարգանում է որպես կենդանի օրգանիզմ՝ դիմակայելու համար նոր մարտահրավերներին և հանդիսանալով ողջ Եվրոպայում օրենքի գերակայությունը և ժողովրդավարությունն ամրապնդող ուժ:

Դատարան ներկայացվող ***բողոքների*** թվի զգալի աճի պատճառով ներկայումս կատարվում են մի շարք բարեփոխումներ: Դատարանի արդյունավետության ապահովմանն ուղղված հիմնական բարեփոխումների գործընթացը սկսվել է 2001թ հունիսին:

Վճիռ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշում, որը վերաբերում է գործի էությանը, կամ, այլ կերպ ասած, փաստացի բողոքին: Վճիռը չպետք է շփոթել...

...Որոշում

Դատարանը որոշում է կայացնում կապված գանգատի ընդունելիության վերաբերյալ: Դա արվում է այն դեպքում, երբ Դատարանը հավաստիանում է, որ համապատասխան բոլոր անհրաժեշտ չափորոշիչները պահպանվել են:

Գանգատ կամ գործ

Վեճ, որը լուծվում է դատական կարգով:

Բողոք

Գանգատի պատճառը: Բողոքը քննվում է, երբ Դատարանը զբաղվում է գանգատով ըստ էության:

Անընդունելիություն

Գանգատը, որն անհիմն է կամ բավարար չափով հիմնավորված չէ, համարվում է անընդունելի և մերժվում է:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գիտե՞ք դուք արդյոք

Դիմողները պարտավոր չեն իրենց գանգատը ներկայացնել Դատարան երկու պաշտոնական լեզուներից մեկով (անգլերենով կամ ֆրանսերենով). նրանք կարող են այն ներկայացնել այն երկրների ցանկացած պաշտոնական լեզուներից մեկով, որոնք վավերացրել են Կոնվենցիան: Լսումները կայանում են Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների պալատում: Դրանք դռնբաց են, եթե Պալատի կամ Մեծ պալատի Նախագահը գործի հանգամանքներից կախված այլ որոշում չի ընդունում:

Գանգատ ներկայացնելը

Պայմաններ, որոնք պետք է բավարարվեն

Ո՞վ կարող է գանգատ ներկայացնել Դատարան

Դիմումներ կարող են ներկայացվել անմիջականորեն ֆիզիկական անձանց կամ պետությունների կողմից, ովքեր կարծում են, որ իրենց իրավունքները խախտվել են: Այսպիսով, Կոնվենցիան ***գանգատները*** տարբերակում է ըստ երկու տեսակի՝

- անհատական գանգատներ՝ ներկայացված ֆիզիկական անձի, անձանց խմբի կամ ոչ-կառավարական կազմակերպության կողմից (ՈԿԿ) մեկ կամ ավելի պետությունների դեմ.
- միջպետական գանգատներ, որ մի պետություն ներկայացնում է մեկ այլ պետության դեմ: Դատարանի ստեղծման պահից սկսած գրեթե բոլոր գանգատները ներկայացվել են ֆիզիկական անձանց կողմից:

Պաշտոնական պահանջները

Ամենից առաջ Դատարանը պետք է դիտարկի այն հարցը, թե ***ընդունելի է*** արդյոք գանգատը: Որպեսզի այն ընդունելի լինի, այն պետք է համապատասխանի Կոնվենցիայում ամրագրված որոշակի պայմանների: Օրինակ, դիմողները պետք է ապացուցեն, որ իրենք «սպառել են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները» (ընդհանուր առմամբ դա նշանակում է, որ իրենց երկրի բարձրագույն դատարանը մերժել է իրենց բողոքը) և նրանք պետք է իրենց գանգատը ներկայացնեն իրենց երկրում վերջնական որոշում կայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

Ակնհայտորեն անընդունելի գանգատները քննվում են մեկ դատավորի կողմից:

Եթե գանգատն ընդունելի է համարվում, Դատարանը խրախուսում է կողմերին (դիմողին և համապատասխան պետությանը) հասնել ***բարեկամական կարգավորման***:

Օրինակ, պետությունը կարող է համաձայնվել փոխհատուցում վճարել և գանգատը հետ է վերցվում: Եթե բարեկամական կարգավորում տեղի չի ունենում, ապա այդ ժամանակ Դատարանը գործը քննում է ըստ էության, այսինքն դիտարկում է, թե արդյոք տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում, թե՝ ոչ:

Գանգատ/դիմող

Կոնվենցիան տարբերակում է երկու տեսակի գանգատներ. անհատական գանգատներ (ներկայացված ցանկացած անձի, անձանց խմբի, ընկերության կամ ՈԿԿ-ի կողմից) և միջպետական գանգատներ (որ մի պետություն ներկայացնում է մեկ այլ պետության դեմ):

Ընդունելիություն

Գանգատը պետք է համապատասխանի որոշակի պահանջների (օր. իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները պետք է սպառված լինեն, այն պետք է ներկայացվի վեց ամսվա ընթացքում, այն պետք է վերաբերի ՄԻԵԿ-ի կողմից պաշտպանված իրավունքի խախտմանը), այլապես այն Դատարանի կողմից անընդունելի կհամարվի՝ առանց բողոքի փաստացի քննության:

Բարեկամական կարգավորում

Համաձայնություն կողմերի միջև, ինչն էլ հետևաբար վերջ է դնում գանգատին, եթե Դատարանը համարում է, որ մարդու իրավունքների շահը բավարար չէ, որպեսզի շարունակվի գործի քննությունը: Երբ դիմողը և համապատասխան պետությունը համաձայնվում են կարգավորել իրենց վեճն այս ճանապարհով, արդյունքը սովորաբար լինում է այն, որ պետությունը դիմողին որոշ գումար է վճարում:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գանգատի ողջ ընթացքը

Գործի վարույթի աղյուսակը

Գիտե՞ք դուք արդյոք

Դատավորներն ընտրվում են Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից յուրաքանչյուր պետության կողմից առաջադրված երեք թեկնածուներից: Նրանք ընտրվում են ինը տարի պաշտոնավարման ժամկետով՝առանց այն երկարացնելու իրավունքի:

Մեծ պալատ

Սա Դատարանի ընդլայնված ձևաչափն է՝ 17 դատավորներից կազմված: Մեծ պալատը կարող է լսել որևէ բողոքարկման գործ կամ գործեր, որտեղ բարձրացվում են մարդու իրավունքների հետ կապված լուրջ հարցեր, որոնք կարող են քննվել նրա կողմից:

Արդարացի բավարարում - նյութական վնաս - ոչ-նյութական վնաս

Եթե Դատարանը վճիռ է կայացնում ընդդեմ որևէ պետության և նշում, որ դիմողը վնաս է կրել, այն կարող է որոշել արդարացի բավարարում շնորհել նրան, այսինքն՝ դրամական որոշ գումար վճարել որպես փոխհատուցում : Վնասը կարող է լինել «նյութական» (գույքի կամ եկամտի աղբյուրի կորուստ) կամ «ոչ նյութական» (տառապանք, անձի արժանապատվությանը հասցված վիրավորանք և այլն...):

Դատավարություններ ազգային մակարդակում

Վեճի սկիզբը

Դատավարություններ ազգային դատարաններում
Ներպետական դատական միջոցների սպառում

Ազգային բարձրագույն դատարանի որոշումը

Վարույթներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

Գանգատ Դատարանին
Ընդունելիության չափորոշիչները

- Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառում
- 6-ամսյա վերջնաժամկետ Դատարան դիմելու համար ներպետական վերջնական դատական որոշումից սկսած
- Բողոքները պետք է հիմնված լինեն Եվրոպական կոնվենցիայի վրա
- Բողոքները պետք է ուղղված լինեն Կոնվենցիայի կողմ որևէ պետության դեմ

Նախնական վերլուծություն

- **Անընդունելիության որոշում** = գործն ավարտված է
- Ընդունելիության և ըստ էության քննարկում
- Որոշում ընդունելիության մասին
- Խախտում արձանագրած վճիռ
- Խախտում չարձանագրած վճիռ
- Գործը վերաքննելու խնդրանք
- **Խնդրանքը մերժվել է** = գործն ավարտված է
- Խնդրանքն ընդունվել է = փոխանցված է Մեծ պալատին
- Խախտում արձանագրած վերջնական վճիռ
- **Խախտում չարձանագրած վճիռ** = գործն ավարտված է

Վճռի կատարումը

Գործի փոխանցումը Նախարարների կոմիտե

Համապատասխան պետության պարտավորությունները

- Փոխհատուցման վճարում (արդարացի բավարարում)
- Ընդհանուր միջոցառումների ընդունում (փոփոխություններ օրենսդրության մեջ)
- Անհատական միջոցառումների ընդունում (վերականգնում, գործի քննության վերսկսում...)

Քննվում է Նախարարների կոմիտեի կողմից

- Վճռի բավարար կատարում
- Վճռի անբավարար կատարում

Վերջնական որոշում =գործն ավարտված է

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գիտե՞ք դուք արդյոք

Վճռի կատարումը շարունակում է մնալ Նախարարների կոմիտեի հսկողության տակ մինչև այն պահը, քանի դեռ ցանկալի արդյունքներ ձեռք չեն բերվել: Նախարարների կոմիտեն ակտիվ մասնակցություն է ունենում լուծումներ փնտրելու հարցում՝ առաջարկելով իր աջակցությունն ու օգնությունը, կամ, եթե անհրաժեշտ է, ճնշում գործադրելով: Երբ Կոմիտեն համարում է, որ վճիռն ամբողջությամբ կատարվել է, այն հրապարակավ Վերջնական որոշում է ընդունում՝ մանրամասն ներկայացնելով ձեռնարկված միջոցները:

Ինչ է կատարվում Դատարանի կողմից վճիռ կայացնելուց հետո

Վճիռների կատարումը և թողած ազդեցությունը

Դատարանի վճիռները պարտադիր են. երբ Դատարանը գտնում է, որ խախտում է կատարվել, համապատասխան երկիրը պարտավոր է կատարել վճիռը, քայլեր ձեռնարկելով ապահովելու համար, որ նմանատիպ խախտումներ այլևս տեղ չգտնեն և վերացնելով տուժածի նկատմամբ դրանց ունեցած հետևանքները: Դատարանը կարող է նաև պարտավորեցնել պետությանը դիմողին որոշ գումար վճարել որպես «արդարացի բավարարում», եթե տվյալ գործում դրամը կարող է փոխհատուցել վնասը: Կարող է անհրաժեշտ լինել նաև այլ կոնկրետ միջոցառումների կիրառում, ինչպես օրինակ՝ դիմողին ազատ արձակել, եթե նա գտնվում է կալանքի տակ, վերականգնել կապերը երեխայի հետ, տրամադրել նրան մշտական բնակության թույլտվություն և այլն:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն է, որ պատասխանատու է Դատարանի վճիռների կատարման մոնիտորինգի համար. այն օգնում է պետություններին ճշտելու անհրաժեշտ միջոցառումները և լուծումներ գտնելու այն ժամանակ, երբ ձեռնարկված որոշակի միջոցառումները չեն ծառայում խնդիրների լուծմանը: Բացի այդ, այն գնահատում է դիմողի համար ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ցանկացած այլ անձի համար, ով կարող է հայտնվել նման իրավիճակում:

Պետությունների կողմից Դատարանի վճռի համաձայն ձեռնարկված ընդհանուր միջոցառումների օրինակներ.

- Ավստրիան վերացրել է մենաշնորհը հեռուստատեսության ոլորտում
- Բելգիան բարեփոխել է անօթևան մարդկանց մասին օրենքները և միջոցներ ձեռնարկել արգելելու համար որևէ խտրականության դրսևորում արտամուսնական կապից ծնված երեխաների հանդեպ
- Բուլղարիան ստեղծել է այլընտրանքային ծառայություն բոլոր այն մարդկանց համար, ովքեր հրաժարվում են ծառայությունից իրենց համոզմունքներից ելնելով
- Գերմանիան հայտնի մարդկանց ընձեռել է իրենց անձնական լուսանկարների հրապարակումն արգելելու ավելի լայն իրավունք
- Դանիան ընդարձակել է արհմիությանը չանդամագրվելու իրավունքը
- Թուրքիան վերացրել է անվտանգության պետական դատարաններում զինվորական դատավորների մասնակցությունը
- Իռլանդիան ապաքրեականացրել է միասեռական գործողությունները
- Իտալիան դատապաշտպանների համար պարտադիր է դարձրել ներկայանալ Վճռաբեկ դատարան
- Լատվիան վերացրել է ընտրություններում թեկնածուների համար խտրականություն հանդիսացող լեզվի թեստերը
- Լեհաստանն արդյունավետ փոխհատուցման համակարգ է ներդրել որոշակի մարդկանց համար, ում սեփականությունը բռնագրավվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո
- Խորվաթիան արդյունավետ դատական պաշտպանության միջոց է ընդունել դատավարությունների չափից ավելի տևողության դեմ
- Հունաստանը բարելավել է ազատազրկման պայմաններն իրենց վտարմանը սպասող օտարերկրացիների համար
- Հունգարիան որոշումներ կայացնելու ավելի արդար գործընթաց է ներդրել կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու հետ կապված
- Մոլդովան ճանաչել է կրոնի ազատությունը
- Միացյալ Թագավորությունն արգելել է մարմնական պատիժները դպրոցներում
- Նիդեռլանդները բարելավել են իրենց օրենսդրությունը մտավոր հիվանդներին կալանքի տակ պահելու վերաբերյալ
- Շվեդիան ուղղումներ է մտցրել հրապարակային դատավարության դրույթների մեջ
- Շվեյցարիան վերանայել է իր քրեական դատական համակարգը և քրեական ընթացակարգերը
- Չեխիայի Հանրապետությունն ընդունել է սնանկության մասին նոր օրենք
- Ռումինիան վերացրել է այն դրույթները, որոնք հնարավոր էին դարձնում անվավեր ճանաչել վերջնական դատական որոշումները
- Ռուսաստանի Դաշնությունը բարելավել է Չեռնոբիլի աղետից տուժածների համար սոցիալական ապահովության պայմանները
- Սլովակիայի Հանրապետությունը ուղղումներ է մտցրել երեխաներին մանկական հաստատություններում տեղաբաշխելու օրենսդրության մեջ
- Սլովենիան միջոցներ է ձեռնարկել կանխարգելելու համար ոստիկանության կողմից վատ վերաբերմունքը
- Ուկրաինան ուղղումներ է մտցրել զրպարտության մասին օրենսդրության մեջ
- Ֆինլանդիան ուղղումներ է մտցրել երեխայի խնամակալության և այցելության իրավունքի մասին օրենքում
- Ֆրանսիան, Իսպանիան և Միացյալ Թագավորությունը օրենքներ են ընդունել հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման մասին

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Պետությունների կողմից Դատարանի վճռի համաձայն ձեռնարկված առանձին միջոցառումների օրինակներ.

- Ադրբեջանում մի դիմողի, ում անօրինաբար ազատել էին աշխատանքից, վերականգնել էին իր աշխատատեղում
- Բոսնիա և Հերցեգովինայում մի դիմողի վերադարձրել են նրա խնայողությունները
- Բուլղարիայում Գլխավոր դատախազը պահանջել էր վերաբացել մի դատավարություն, որտեղ անարդար վճիռ էր կայացվել
- Գերմանիայում հորը, ում երեխան ծնվել էր արտամուսնական կապից և լքվել մոր կողմից, շնորհվել էր խնամակալության իրավունք
- Թուրքիայում չեղյալ էր համարվել լուծարված կուսակցությունների անդամների համար քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը
- Լատվիայում մի դիմողի, ում կալանքի պայմանները չէին համապատասխանում նրա տարիքին (84 տարեկան) ազատ էին արձակել
- Լիտվայում մի դիմողի տվյալները հանվել էին երկրում բնակվելու իրավունք չունեցող օտարերկրացիների ցուցակից
- Լեհաստանում դիմողի վրայից հանվել էր զրպարտության մեղադրանքով դատվածությունը
- Խորվաթիայում մի դիմողի հետ էին վերադարձրել նրա անձնագիրը, որն իշխանությունները վերցրել էին
- Կիպրոսում մի դիմող հնարավորություն էր ստացել մասնակցելու ընտրություններին
- Հունաստանում դիմողներին դպրոց բացելու հնարավորություն էր ընձեռվել
- Հունգարիայում մի պատմաբանի իրավունք էր տրվել օգտվելու գաղտնի փաստաթղթերից
- Միացյալ Թագավորությունում բարձրացվել էր մի դիմողի թոշակը, ով ճանաչվել էր որպես տուժած քիմիական փորձարկումներից զինվորական ծառայության ժամանակ
- Մոլդովայում մի եկեղեցի ճանաչվել էր և գրանցվել
- Մոնթենեգրոյում մի դիմողի բնակարանն անօրինաբար զավթած անձը վտարվել էր
- Շվեյցարիայում հայրը կարողացել է գտնել իր երեխային, ում մայրը գողացել էր և թաքցրել նրան Մոզամբիկում
- Չեխիայի Հանրապետությունում մի դիմողի տրվել էր կենսաթոշակ, ինչից նրան զրկել էին
- Պորտուգալիայում հորը թույլատրվել էր նորից տեսնվել իր որդու հետ
- Ռումինիայում ազգայնացված գույքի նախկին սեփականատերերը հնարավորություն էին ստացել հետ վերադարձնելու իրենց ունեցվածքը կամ ստանալու փոխհատուցում
- Ռուսաստանի Դաշնությունում մի դիմողի քաղաքացիություն էր շնորհվել
- Սլովակիայի Հանրապետությունում մի դիմող հնարավորություն էր ստացել վիճարկելու հայրության մասին որոշումը
- Վրաստանում մի դիմողի, ում կամայականորեն կալանքի տակ էին վերցրել, ազատ էին արձակել
- Ֆինլանդիայում ծնողները կարողացել էին իրենց որդուն տալ իրենց ընտրած անունը, ինչն իշխանությունները մերժել էին

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան

*Առանձին հոդվածների և արձանագրությունների պարզեցված տարբերակը**

Համառոտ նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ երկրների կառավարություններն աշխատում են ի նպաստ խաղաղության և ավելի շատ միասնության՝ հիմնվելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա:

Նրանք որոշել են այս Կոնվենցիայի հիման վրա առաջին քայլերն իրականացնել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում պարունակած բազմաթիվ իրավունքների պահպանման համար:

◆ Հոդված 1 - Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի յուրաքանչյուր ոք օգտվի սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքներից:

◆ Հոդված 2 - Կյանքի իրավունք

Դուք ունեք կյանքի իրավունք:

◆ Հոդված 3 - Խոշտանգումների արգելում

Ոչ ոք իրավունք չունի վնասել կամ խոշտանգել ձեզ: Անգամ անազատության մեջ ձեր մարդկային արժանապատվությունը պետք է հարգված լինի:

◆ Հոդված 4 - Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

Արգելվում է վերաբերվել ձեզ հետ որպես ստրուկի կամ պարտադրել կատարել հարկադիր աշխատանք:

◆ Հոդված 5 - Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Դուք ունեք ազատության իրավունք:

Եթե ձեզ ձերբակալել են, դուք իրավունք ունեք իմանալու, թե ինչի համար:

Եթե ձեզ ձերբակալել են, դուք ունեք արագ դատավարության իրավունք, կամ մինչև դատի կայացումը՝ ազատ արձակվելու իրավունք:

◆ Հոդված 6 - Արդար դատաքննության իրավունք

Դուք ունեք արդար դատաքննության իրավունք անաչառ ու անկախ դատավորի կողմից:

Եթե ձեզ մեղադրում են հանցագործություն կատարելու մեջ, ապա դուք անմեղ եք հանդիսանում մինչև այն պահը, երբ կապացուցեն ձեր մեղքը: Դուք ունեք փաստաբանի օգնության իրավունք, ում վճարում է պետությունը, եթե դուք դրա հնարավորությունը չունեք:

◆ Հոդված 7 - Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

Դուք չեք կարող մեղավոր ճանաչվել հանցագործություն կատարելու մեջ, եթե այն պահին, երբ դուք ինչ-որ բան եք կատարել, այդ հարցի վերաբերյալ չի եղել ոչ մի օրենք:

◆ Հոդված 8 - Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Դուք ունեք ձեր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

◆ Հոդված 9 - Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Դուք ունեք մտքի, խղճի և կրոնի ազատություն: Դուք իրավունք ունեք ձեր կրոնը դավանելու տանը և հրապարակավ և փոխելու ձեր կրոնը, եթե դուք ցանկանաք:.

◆ Հոդված 10 - Արտահայտվելու ազատություն

Դուք ունեք իրավունք պատասխանատու կերպով ասելու և գրելու այն, ինչ որ դուք մտածում եք, ինչպես նաև տեղեկատվություն ուրիշներին տալու և ստանալու իրավունք: Այս իրավունքը ներառում է նաև մամուլի ազատությունը:

Հոդված 11 - Հավաքների և միավորման ազատություն

Դուք ունեք խաղաղ հավաքներին մասնակցելու և միավորումներ ստեղծելու կամ դրանց միանալու իրավունք՝ ներառյալ արհմիությունները:

Հոդված 12 - Ամուսնության իրավունք

Դուք ունեք ամուսնանալու և ընտանիք ունենալու իրավունք:

Հոդված 13 - Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Եթե ձեր իրավունքները խախտվել են, դուք կարող եք այդ մասին պաշտոնապես բողոքել դատարաններին կամ այլ պետական մարմիններին:

Հոդված 14 - Խտրականության արգելում

Դուք ունեք այդ իրավունքն անկախ ձեր մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ կրոնական համոզմունքից կամ ծագումից:

Հոդվածներ 19 - ից մինչև 51

Այս հոդվածները պարզաբանում են, թե ինչպես է աշխատում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Հոդված 34 - Անհատական գանգատներ

Եթե ձեր իրավունքները, որոնք ամրագրված են Կոնվենցիայում, խախտվել են անդամ պետություններից մեկում, ապա սկզբում դուք պետք է դիմեք բոլոր իրավասու ազգային մարմիններին:

Եթե այդ ամենը արդյունք չի տվել, այդ ժամանակ դուք կարող եք դիմել անմիջականորեն Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Հոդված 52 - Գլխավոր քարտուղարի պահանջները

Եթե Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը դիմում է համապատասխան խնդրանքով, ապա կառավարությունը պետք է պարզաբանումներ տա այն մասին, թե ինչպես է տվյալ երկրի ազգային օրենսդրությունը պաշտպանում սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները:

Կոնվենցիային կից արձանագրություններ

Հոդված 1 թիվ 1 Արձանագրության - Սեփականության պաշտպանություն

Դուք ունեք սեփականություն ունենալու և դրանից օգտվելու իրավունք:

Հոդված 2 թիվ 1 Արձանագրության - Կրթության իրավունք

Դուք ունեք դպրոց գնալու իրավունք:

Հոդված 3 թիվ 1 Արձանագրության - Ազատ ընտրությունների իրավունք

Դուք իրավունք ունեք ընտրելու ձեր երկրի կառավարությունը գաղտնի քվեարկությամբ:

Հոդված 2 թիվ 4 Արձանագրության - Տեղաշարժի ազատությունը

Եթե դուք օրինական կարգով գտնվում եք որևէ երկրում, դուք ունեք այդ երկրի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

Հոդված 1 թիվ 6 Արձանագրության - Մահապատժի վերացումը

Մահապատիժը պետք է վերացվի:

Հոդված 2 թիվ 7 Արձանագրության - Քրեական գործերով գանգատարկման իրավունքը

Դուք կարող եք բողոքել դատավճռի դեմ վերադաս դատական ատյան, եթե ձեզ դատապարտել են հանցագործություն կատարելու համար:

Հոդված 3 թիվ 7 Արձանագրության - Փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում

Դուք ունեք փոխհատուցման իրավունք, եթե ձեզ մեղավոր են ճանաչել հանցագործություն կատարելու մեջ, իսկ հետո պարզվել է, որ դուք անմեղ եք:

Հոդված 1 թիվ 12 Արձանագրության - Խտրականության ընդհանուր արգելում

Դուք չեք կարող պետական իշխանության մարմինների կողմից ենթարկվել խտրականության որևէ դրսևորման՝ ինչպես օրինակ ձեր մաշկի գույնի, սեռի, լեզվի, քաղաքական կամ կրոնական համոզմունքի կամ ծագման պատճառով:

www.human-rights-convention.org

*Այս փաստաթուղթը կազմվել է Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինության կողմից՝ Դատարանի Մամուլի և հասարակության հետ կապերի բաժնի, ինչպես նաև Մարդու իրավունքների և իրավական հարցերի Գլխավոր տնօրինության Տեղեկատվության և հրատարակչությանն աջակցման բաժնի հետ համատեղ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պարզեցված տարբերակը նախատեսված է միայն կրթական նպատակների համար: Այն հիմնված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի պարզեցված տարբերակի վրա, որը պատրաստել են «Amnesty International»-ը և ուրիշները: Իրավաբանորեն վավերական միակ տեքստերն են հանդիսանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի և նրան կից արձանագրությունների անգլերեն և ֆրանսերեն տարբերակները:

Հոդված 2-ը պաշտպանում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը:

Դա Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ամենակարևոր հոդվածներից մեկն է, քանի որ առանց կյանքի իրավունքի անհնարին է օգտվել Կոնվենցիայի տրամադրած այլ իրավունքներից:

Հոդված 2-ը պետությունների վրա մի շարք պարտավորություններ է դնում:

- դիտավորությամբ կյանքից զրկելուց ձեռնպահ մնալու պարտավորություն
- մարդկային կյանքը պաշտպանելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու պարտավորություն: Դա ներառում է այնպիսի օրենքների և քրեական պատիժների ընդունում, որոնք մարդկանց հետ կպահեն ուրիշներին վնասելու մտքից, ինչպես նաև մահացու դեպքերի մանրակրկիտ հետաքննություն իրականացնելու պարտավորություն:

Հոդված 2.

Դուք ունեք կյանքի իրավունք:

Կյանքի *իրավունք*

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *կյանքի իրավունքը ներառում է...*

...բանտարկյալների պաշտպանությունը պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր իրականացնեն բանտերում գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար:

2006թ Դատարանը գտավ, որ Ռենոլդն ընդդեմ Ֆրանսիայի գործում տեղի է ունեցել հոդված 2-ի խախտում: Էլեն Ռենոլդը բողոքեց, որ ֆրանսիական իշխանություններն անհրաժեշտ միջոցառումներ չեն իրականացրել իր եղբոր կյանքը պաշտպանելու համար, ով 2000թ հուլիսին ինքն իրեն կախել էր Բուա-դ'Արսի բանտի իր խցում, որտեղ նա գտնվում էր նախնական կալանքում: Դատարանն ի թիվս այլոց նշեց, որ այն բանտարկյալները, որոնց մասին հայտնի է, որ նրանք տառապում են լուրջ հոգեկան խանգարումներով և կարող են ինքնասպան լինեն, պահանջում են հենց իրենց վիճակին համապատասխան հատուկ միջոցառումներ:

...պաշտպանություն բնապահպանական վտանգներից. պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն պաշտպանելու համար մարդկանց առողջությունը և կանխելու ցանկացած բնապահպանական սպառնալիքները:

2008թ Դատարանը գտավ, որ Բուդաևան և ուրիշներն ընդդեմ Ռուսաստանի գործում տեղի է ունեցել հոդված 2-ի խախտում: 6 դիմողներն էլ ապրում էին Թիրնաուզ քաղաքում, որը գտնվում է Էլբրուս լեռան հարող լեռնային շրջանում՝ Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետությունում (Ռուսաստան): 1937թ սկսած այդ շրջանում ամեն տարի, հատկապես ամռանը տեղի էին ունենում սողանքներ: Տվյալ գործում դիմողները մեղադրում էին Ռուսաստանի իշխանություններին նրանում, որ վերջիններս չէին նախազգուշացրել լայնատարած սողանքների մասին, որ ավիրեցին Թիրնաուզը 2000թ հուլիսին, այդ մասին չէին տեղեկացրել տեղի բնակչությանը, չէին իրականացրել տարհանում և մարդկանց փրկելու գործողություն, իսկ այդ աղետից հետո չէին անցկացրել դատական հետաքննություն:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Կոնվենցիայի հոդված 3-ն արգելում է խոշտանգումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բոլոր հանգամանքներում, ներառյալ ահաբեկչության դեմ տարվող միջազգային պայքարի համատեքստում:

Պետությունները պարտավորություն են կրում նաև կանխարգելիչ միջոցառումներ անցկացնել, ինչպես օրինակ ընդունել այնպիսի օրենքներ, որոնք քրեական պատասխանատվություն են սահմանում հոդված 3-ին հակասող վերաբերմունքի համար, ինչպես նաև մանրամասն հետաքննություն կատարել խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ցանկացած պնդման վերաբերյալ:

Խոշտանգումներից պաշտպանումը համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունք է և չի վիճարկվում միջազգային իրավունքի կողմից. այդ բնագավառում գոյություն ունեն հատուկ կոնվենցիաներ, որոնք կազմվել են Եվրոպայի խորհրդի (օր. Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոնվենցիան և Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիան), ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կողմից:

Հոդված 3.

Ոչ ոք իրավունք չունի վնաս հասցնելու կամ խոշտանգելու ձեզ:

Խոշտանգումների արգելում

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *խոշտանգումների արգելումը կիրառվում է, օրինակ...*

...հարցաքննությունների ժամանակ ոստիկանության կողմից դրսևորվող դաժան վերաբերմունքի դեպքում. իրավապահ մարմինների կողմից կիրառվող հարցաքննության մեթոդները պետք է համապատասխանեն Հոդված 3-ով երաշխավորված իրավունքներին:

2007թ Դատարանը գտավ, որ *Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի* գործում տեղի է ունեցել հոդված 3-ի խախտում: Սարդոր Ջալալօղլու Մամմադովը Ադրբեջանի Ժողովրդավարական կուսակցության գլխավոր քարտուղարը (ընդդիմադիր կուսակցություններից մեկը, որը 2003թ հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների արդյունքները համարեց անօրինական), 2003թ հոկտեմբերի 18-ին ձերբակալվեց և բերման ենթարկվեց ոստիկանության բաժանմունք: Դատարանը գտավ, որ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ժամանակ պրն. Մամմադովը ենթարկվել է խոշտանգումների, իսկ իշխանություններն արդյունավետ հետաքննություն չեն իրականացրել խոշտանգումների վերաբերյալ նրա հայտարարությունների առիթով:

...արտահանձնում և արտաքսում. Դատարանը կարող է սահմանել, որ տեղի է ունեցել Հոդված 3-ի խախտում այն դեպքերում, եթե մի այլ երկիր անձի արտահանձնումը կամ արտաքսումը կարող է հանգեցնել նրան, որ այնտեղ նա կենթարկվի դաժան վերաբերմունքի:

2008թ Դատարանը գտավ, որ Սաադին ընդդեմ Իտալիայի գործում տեղի է ունեցել հոդված 3-ի խախտում: Այդ գործը վերաբերում էր Նասիմ Սաադիին Թունիս հնարավոր արտաքսմանը, որտեղ, ինչպես ինքն էր պնդում, 2005թ ինքը հեռակա կարգով դատապարտվել էր 20 տարվա ազատազրկման որպես ահաբեկչական կազմակերպության անդամ, որը խաղաղ ժամանակներում գործում էր արտասահմանում, ինչպես նաև ահաբեկչություն հրահրելու համար: Դատարանը սահմանեց, որ եթե դիմողի արտաքսումը Թունիս իրականություն դառնա, ապա դա կնշանակի Հոդված 3-ի խախտում:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Կոնվենցիայի հոդված 4-ն արգելում է ստրկությունը, անազատ վիճակում պահելը և պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ենթարկելը: Սա ներառում է նաև մարդկանց թրաֆիքինգը:

Պետություններից պահանջվում է նաև, որպեսզի նրանց օրենսդրությունները երաշխավորեն գործնական և արդյունավետ պաշտպանություն նման գործողություններից:

Հոդված 4.

Արգելվում է վարվել ձեզ հետ ինչպես ստրուկի կամ հարկադրել աշխատել:

Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *ստրկության և հարկադիր աշխատանքի արգելումը ներառում է...*

...տնային աշխատողների պաշտպանություն. պետությունները պետք է անհրաժեշտ միջոցառումներ իրականացնեն մարդկանց տնային ստրկությունից պաշտպանելու համար:

2005թ Դատարանը գտավ, որ *Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի* գործում տեղի է ունեցել հոդված 4-ի խախտում: Սիվա-Ակոֆա Սիլիադինը բողոքել էր, որ ֆրանսիական քրեական իրավունքն իրեն չի տվել բավարար և արդյունավետ պաշտպանություն «անազատ վիճակից», որում նրան պահել էին, կամ, առնվզան, «պարտադիր կամ հարկադիր» աշխատանքից, որ նրանից պահանջել էին կատարել, գործնականում դարձնելով իրեն տնային ստրկուհի: Դատարանը համարեց, որ Ֆրանսիայի քրեական օրենսդրությունը համապատասխան պահին դիմողին չի տրամադրել կոնկրետ և արդյունավետ պաշտպանություն այն գործողություններից, որոնց զոհն էր նա դարձել:

...պայքար մարդկանց թրաֆիքինգի դեմ. 2010թ հունվարին Դատարանը գտավ, որ ***Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի Դաշնության*** գործում տեղի է ունեցել հոդված 4-ի խախտում, համարելով, որ կիպրոսյան և ռուսական իշխանությունները չեն կարողացել պաշտպանել 20-ամյա ռուս կաբարեի պարուհուն, ով դարձել էր մարդկանց թրաֆիքինգի զոհ: Դա Դատարանի առաջին վճիռն էր, որը վերաբերում էր մարդկանց թրաֆիքինգին:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 5.

Եթե ձեզ ձերբակալել են, դուք իրավունք ունեք իմանալու, թե՝ ինչու:
Եթե ձեզ ձերբակալել են, դուք իրավունք ունեք կարճ ժամկետում կանգնելու դատարանի առջև կամ ազատ արձակվելու մինչև դատավարությունը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը հնարավորություն է տալիս ստուգելու, թե օրինական է արդյոք կալանքի տակ պահելը և, հետևաբար, պաշտպանում է մարդկանց կամայական ձերբակալությունից և կալանավորումից:

Պետություններից պահանջվում է նաև կալանքի տակ վերցրած անձանց տրամադրել մի շարք ընթացակարգային երաշխիքներ. յուրաքանչյուր ձերբակալված պետք է որքան հնարավոր է արագ տեղեկացվի ձերբակալման պատճառների մասին և պետք է անհապաղ տարվի դատավորի մոտ կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվի: Բացի դրանից, ցանկացած անձ, ում ձերբակալությունը կամ կալանավորումը հակասում է 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին, ունի փոխհատուցման իրավունք:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը կիրառվում է մասնավորապես...*

...ապօրինի կալանավորման դեպքում. Կոնվենցիան պաշտպանում է մարդկանց ցանկացած կամայական կամ ապօրինի կալանավորումից:

2004թ Դատարանը գտավ, որ Ֆրոմմելթն ընդդեմ Լիխտենշտեյնի գործում տեղի է ունեցել հոդված 5-ի խախտում: Փիթեր Ֆրոմմելթը նախնական կալանքի էր վերցվել 1997թ՝ յուրացումների և խարդախության մեղադրանքով: Նրա պնդմամբ իրեն նախնական կալանքի տակ վերցնելու հարցի քննության ժամանակ տեղ էին գտել ընթացակարգային խախտումներ:

...ապօրինի կալանավորման դեպքում. 2004թ ապրիլին Դատարանը գտավ, որ ***Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի*** գործում տեղի է ունեցել հոդված 5-ի խախտում: Թենգիզ Ասսանիձեն նախկինում եղել է Բաթումիի քաղաքապետը և Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի անդամ: Դիմողին ավելի քան երեք տարի կալանքի տակ են պահել արդեն այն բանից հետո, երբ 2001թ Վրաստանի Գերագույն դատարանն արդարացրել էր նրան: Դատարանը գտավ, որ դիմողը կամայականորեն է ենթարկվել կալանավորման և որ վրացական պետությունը պետք է որքան հնարավոր է արագ ազատ արձակի նրան: Սա առաջին վճիռն էր, որով Դատարանը կարգադրում էր մի պետության հնարավորինս արագ ազատել դիմողին:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 8.

Դուք ունեք ձեր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը:

Պետությունը չի կարող միջամտել մարդկանց անձնական կյանքին. միևնույն ժամանակ այն պարտավոր է պաշտպանել բոլոր մարդկանց բարոյական և ֆիզիկական անձեռնմխելիությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «անձնական և ընտանեկան կյանքի» պաշտպանությանը տվել է բավական լայն մեկնաբանություն, հաշվի առնելով, որ օտարերկրացիների վտարումը, անձնական կյանքում փոխադարձ համաձայնությամբ միասեռական հարաբերությունների արգելումը, պետության կողմից կալանավորին ընտանիքի անդամի հուղարկավորությանը ներկա լինելու հնարավորություն ընձեռելու մերժումը կամ պետության մերժումը ճանաչել մեռելածին երեխայի իրական հայրությունը, այս ամենը հանդիսանում են հոդված 8-ի խախտում:

Անձնական և *ընտանեկան կյանքը* հարգելու իրավունք

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը կիրառվում է մասնավորապես...*

...մարդու անձնական կյանք ներխուժող հրապարակումների դեպքում. հանրահայտ մարդիկ և թագավորական ընտանիքների անդամները հիմնվում են հոդված 8-ի վրա՝ պաշտպանելու համար իրենց անձնական կյանքը ԶԼՄ-ների ներխուժումից:

2004թ Դատարանը գտավ, որ *Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* գործում տեղի է ունեցել հոդված 8-ի խախտում: Արքայադուստր Քարոլայն ֆոն Հաննովերը մի քանի անգամ ապարդյուն դիմել էր Գերմանիայի դատարաններ 1990-ական թվականներին գերմանական ամսագրերում հայտնված մի շարք լուսանկարների հետագա հրապարակումներն արգելելու դատական որոշում կայացնելու համար, պնդելով, որ դա խախտում է իր անձնական կյանքը հարգելու իրավունքը և իր կերպարի օգտագործումը վերահսկելու իր իրավունքը: Դատարանը հայտարարեց, որ յուրաքանչյուր ոք, ներառյալ հանրությանը հայտնի մարդիկ «օրինական սպասումներ» ունեն, որ իրենց անձնական կյանքը պետք է պաշտպանված լինի:

...ամուսնալուծությունից հետո երեխայի նկատմամբ խնամակալության դեպքում. պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն կատարելու համար ծնողների և երեխաներիմիջևսերտփոխհարաբերություններ ապահովելու դատարանի կայացրած որոշումը:

2006թ Դատարանը գտավ, որ *Բայրամին ընդդեմ Ալբանիայի* գործում տեղի է ունեցել հոդված 8-ի խախտում: Ագիմ Բայրամին բողոքել էր, որ ինքը չի կարողացել ապահովել դատարանի որոշման կատարումն իր աղջկա նկատմամբ խնամակալություն իրականացնելու վերաբերյալ, ում իր նախկին կինը ամուսնալուծությունից հետո տարել էր Հունաստան: Դատարանը վերահաստատեց, որ Կոնվենցիան պետություններից պահանջում է ազգային դատարանի վերջնական վճռի կատարման ժամանակ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը վերամիավորելու համար ծնողներին և նրանց երեխաներին, ընդ որում Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել խախտում դիմողի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի հարցում:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդվածը 9-ը պաշտպանում է յուրաքանչյուրի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը. այս իրավունքներն անխախտելի են, ինչպես և սեփական կրոնը կամ համոզմունքը փոխելու իրավունքը: Հոդված 9-ը պաշտպանում է բոլոր համընդհանուր ճանաչում ունեցող համոզմունքների համակարգերը:

Հոդված 9.

Դուք ունեք մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք:

Մտքի, խղճի և *կրոնի ազատություն*

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ,
մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ներառում է ...

...սեփական կրոնն ազատորեն դավանելու իրավունքը. Պետությունները պետք է պահպանեն այս իրավունքը, որը պաշտպանված է 9-րդ հոդվածով:

1993թ Դատարանը գտավ, որ *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի* գործում տեղի է ունեցել հոդված 9-ի խախտում: Մինոս Կոկկինակիսը, Եհովայի վկայի հետևորդը, ավելի քան 60 անգամ ձերբակալվել էր հոգեորսության համար:

...Պետության չեզոքությունը. պետությունները չպետք է միջամտեն կրոնական համայնքի ներքին գործերին:

2000թ Դատարանը գտավ, որ *Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի* գործում տեղի է ունեցել հոդված 9-ի խախտում: Դիմողները, բուլղարացի մահմեդականների նախկին գլխավոր մուֆտին և իսլամի ուսուցիչը, բողոքում էին բուլղարական իշխանությունների որոշման դեմ ըստ որի պետք էր փոխել մահմեդական համայնքի ղեկավարությունը և կանոնադրությունը: Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել միջամտություն մահմեդական համայնքի ներքին գործերի մեջ և դիմողների կրոնի ազատության նկատմամբ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 10.

Դուք իրավունք ունեք պատասխանատու կերպով ասելու և գրելու այն,ինչ մտածումեք, ինչպես նաև տեղեկություններ տարածելու և ստանալու դրանք այլ մարդկանցից: Այս իրավունքը ներառում է նաև մամուլի ազատությունը:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու ազատությունը՝ ժողովրդավարական հասարակության գլխավոր հիմքերից մեկը:

ՁԼՄ-ները պահանջում են առանձնահատուկ պաշտպանություն, քանի որ նրանք առանցքային դերակատարում ունեն արտահայտվելու ազատությունը պաշտպանելու գործում:

Այս հոդվածը պաշտպանում է քննադատելու, ենթադրություններ անելու կամ գնահատականներ տալու իրավունքը, ինչպես նաև սեփական կարծիք ունենալու իրավունքը:

Արտահայտվելու *ազատություն*

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *արտահայտվելու ազատության իրավունքը ներառում է...*

...մամուլի և հեռարձակվող ՁԼՄ-ների ազատությունը. առանց ազատ և բազմակարծիք մամուլի չի կարող լինել ժողովրդավարական հասարակություն: 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատությունը տարածվում է նաև այն տեղեկատվության կամ գաղափարների վրա, որոնք կարող են վիրավորել, ցնցել կամ անհանգստություն պատճառել պետությանը կամ բնակչության որևէ հատվածի: Պետությունները պարտավոր են պաշտպանել այդ իրավունքը:

2008թ Դատարանը գտավ, որ *Լոպեշ Գոմեշ դա Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի* գործում տեղի է ունեցել հոդված 10-ի խախտում: Վիսենտ Ժորժ Լոպեշ Գոմեշ դա Սիլվան, ով այդ ժամանակ աշխատում էր որպես «Público» օրաթերթի մենեջեր, դատապարտվել էր զրպարտության համար: Դատարանը մասնավորապես նշեց, որ արտահայտվելու ազատությունը առանձնահատուկ կարևորություն ունի մամուլի համար, ընդ որում, ընդունելի քննադատության սահմանափակումներն ավելի լայն են քաղաքական գործչի նկատմամբ, ով գործում է որպես հանրային դեմք:

Մյուս կողմից 2009թ *Թայմս Նյուսփեյփերզ ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (NN 1 և 2)* գործում Դատարանը եկավ այն եզրակացության, որ համացանցում տեղաբաշխված զրպարտչական հոդվածների հրապարակման համար այս թերթի նկատմամբ կայացված մեղադրանքը չի հանդիսանում Կոնվենցիայի խախտում:

...պետական ծառայողների համար արտահայտվելու ազատությունը. Կոնվենցիան պաշտպանում է պետական ծառայողներին իրենց կարծիքն ազատորեն արտահայտելու սահմանափակումներից՝ կապված չեզոքություն պահպանելու իրենց պարտավորությունների հետ, բացառությամբ արտակարգ հանգամանքների:

1995թ Դատարանը գտավ, որ *Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի* գործում տեղի է ունեցել հոդված 10-ի խախտում: Դիմողը պնդում է, որ պետական ծառայությունից իրեն ազատելը, կապված որպես ԳԿԿ (Գերմանիայի կոմունիստական կուսակցություն) անդամ իր քաղաքական գործունեությամբ զբաղվելու հետ՝ խախտում է ազատորեն արտահայտվելու իր իրավունքը: Դատարանը որոշեց, որ դիմողին աշխատանքից ազատելը հանդիսացել է անհամաչափ պատիժ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդվածը 11-ը պաշտպանում է մարդկանց ինքնակազմակերպվելու և խաղաղ հավաքների և ցույցերի մասնակցելու իրավունքը, և երաշխավորում է նրանց իրավունքը ստեղծել միավորումներ և արհմիություններ և անդամակցել դրանց:

Պետությունները պարտավոր են համապատասխան քայլեր ձեռնարկել պաշտպանելու համար օրինական խաղաղ ցույցերը. իսկ հասարակական վայրերում ցույցերը կարգավորող կանոնները չպետք է հետ պահեն մարդկանց ազատ խաղաղ հավաքներ իրականացնելու իրենց իրավունքից:

Հոդված 11.

Դուք իրավունք ունեք մասնակցելու խաղաղ հավաքների և ստեղծել միավորումներ կամ անդամակցել դրանց՝ ներառյալ արհմիությունները:

Հավաքների և միավորման ազատություն

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *հավաքների և միավորման ազատության իրավունքը ներառում է ...*

...միավորումներ ստեղծելու ազատությունը. պետությունները պետք է երաշխավորեն հոդված 11-ով պաշտպանված այդ իրավունքը:

2007թ Դատարանը գտավ, որ *Ռամազանովան և ուրիշներն ընդդեմ Ադրբեջանի* գործում տեղի է ունեցել հոդված 11-ի խախտում: Դիմողները հիմնել էին «Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանությանը Բաքվի անօթևան և խոցելի բնակիչներին» անվանումով միավորում և մի քանի անգամ դիմել իշխանություններին այն գրանցելու համար: Դատարանը համարեց, որ այդ միավորման գրանցումը զգալի չափով հետաձգելը, ինչը խախտել է նորմատիվային ժամկետները, հավասարազոր է դիմողների միավորման ազատության իրավունքի խախտմանը:

...խաղաղ հավաքների ազատությունը հանրային վայրերում (ցույց). պետությունները պարտավոր են երաշխավորել խաղաղ հավաքների ազատությունը: Կարգուկանոնն ապահովելու համար պետական մարմինների կողմից օրինական է սահմանել նախնական թույլտվություն, եթե դա նախատեսված է օրենքով:

2007թ Դատարանը գտավ, որ *Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի* գործում տեղի է ունեցել հոդված 11-ի խախտում: Արմեն Մկրտչյանին ենթարկել էին տուգանքի 2002թ մայիսին ցույցի մասնակցելու համար: Նշելով, որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն չուներ ցույցերի կազմակերպումը կարգավորող օրենսդրություն, Դատարանը եզրակացրեց, որ դիմողի՝ հավաքների ազատության իրավունքին միջամտելն օրենքով նախատեսված չի եղել:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 14.

Դուք ունեք այս իրավունքը անկախ ձեր մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ կրոնական համոզմունքից կամ ծագումից:

Հոդված 1 թիվ 12 Արձանագրության - Խտրականության ընդհանուր արգելում.

Դուք չեք կարող ենթարկվել խտրականության պետական մարմինների կողմից կախված, օրինակ, ձեր մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ կրոնական համոզմունքից կամ ծագումից:

Խտրականության արգելումը մարդու իրավունքների պաշտպանության առանցքային մասերից մեկն է: Այն սերտորեն կապված է հավասարության սկզբունքի հետ, որտեղ ասվում է, որ բոլոր մարդիկ ծնվում և ապրում են ազատ՝ հավասար արժանապատվությամբ և իրավունքներով: Կոնվենցիային կից թիվ 12 Արձանագրությունը (խտրականության ընդհանուր արգելում), որն ուժի մեջ է մտել 2005թ ապրիլին, նույնպես պաշտպանում է խտրականությունից:

Խտրականության արգելումը պարտադիր է մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջազգային փաստաթղթերի համար:

Խտրականության արգելում

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ, *խտրականության արգելումը կիրառվում է, օրինակ...*

...խտրականություն, հիմնված սեռական կողմնորոշման վրա. պետությունները պետք է երաշխավորեն, որպեսզի մարդկանց վերաբերվեն հավասարապես, անկախ նրանց սեռական կողմնորոշումից:

2003թ Դատարանը գտավ, որ *Քարներն ընդդեմ Ավստրիայի* գործում տեղի է ունեցել հոդված 14-ի խախտում: Զիգմունդ Քարները բողոքել էր ավստրիական դատարանների կայացրած որոշման դեմ այն մասին, որ ընտանիքի անդամի օրինական իրավունքը վարձակալության ժառանգության վերաբերյալ չի տարածվում միասեռական զույգերի վրա:

...խտրականություն, հիմնված ծագման վրա. պետությունները պետք է երաշխավորեն հավասար վերաբերմունք անկախ անձի ծագումից:

2007թ Դատարանը գտավ, որ Դ. Հ.-ն ընդդեմ Չեխիայի *Հանրապետության* գործում տեղի է ունեցել հոդված 14-ի խախտում, երբ գնչուների երեխաներն ուղարկվում էին հատուկ դպրոցներ:

...խտրականություն, հիմնված ծագման վրա. պետությունները պետք է երաշխավորեն հավասարության սկզբունքը ծագման հետ կապված հարցերում, առանձնապես ժառանգություն ստանալու նկատմամբ:

2004թ Դատարանը գտավ, որ *Պլան և Պունսերնոն ընդդեմ Անդորրայի* գործում տեղի է ունեցել հոդված 14-ի խախտում: Գործը վերաբերում է Անտոնի Պլա Պունսերնոյի նկատմամբ կայացրած դատական որոշմանը, ով, որպես որդեգրված երեխա, չէր կարող ժառանգել իր մոր ունեցվածքը, քանի որ չէր կարող համարվել «օրինական և կանոնական ամուսնությունից ծնված երեխա», ինչպես որ նախատեսված էր մոր կտակով:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ուսումնասիրություն և վերլուծություն

Ընդհանուր մոտեցում.

այս աշխատանքը պահանջում է ուսումնասիրություն և այդ իսկ պատճառով կարող է տրվել որպես տնային հանձնարարություն կամ բանավոր հանձնարարություն՝ տանը պատրաստելու համար:

Իմ երկիրը և ՄԻԵԿ-ը

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամեն մի երկիր ունի մարդու իրավունքների պաշտպանության իր սեփական պատմությունը. Հունգարիայում, օրինակ, դա ճորտ գյուղացիների ապստամբությունն էր (1514-1710թթ), որի գագաթնակետը հանդիսացավ 1848թ ընդունված օրենսդրությունը, որն արգելում էր ճորտատիրական իրավունքը և նախատեսում մամուլի ազատություն: Եթե ավելի խորանանք պատմության խորքերը մինչև 1215թ Անգլիա, ապա Ազատությունների մեծ խարտիան սահմանադրական միջոցներ օգտագործեց սահմանափակելու համար թագավորական իշխանությունը բռնապետական նպատակներին ծառայեցնելը: Վերջին ժամանակներում էլ Եվրոպայում բազմաթիվ օրինակներ կան ազատության և մարդու իրավունքների համար մղվող պայքարի:

Բաժանեք աշակերտներին խմբերի և խնդրեք նրանց գտնել և ուսումնասիրել մարդկանց, հրապարակումներ, արվեստի ստեղծագործություններ, իրադարձություններ և շարժումներ, որոնք սատարել են ձեր երկրում մարդու իրավունքների զարգացմանը: Մեկ կամ ավելի խմբերի կարելի է խնդրել վերլուծել այլ երկրների կողմից ձեր երկրի վրա թողած ազդեցությունը:

Արդյունքները կարելի է օգտագործել տարբեր կերպ.

- ամեն մի խումբ կարող է իր արդյունքները ներկայացնել մնացած դասարանին
- որոշ աշակերտներ կարող են շարադրություն գրել իրենց խմբի ուսումնասիրած նյութի որոշակի թեմայով:

Ձեր դասարանում կազմակերպեք մարդու իրավունքներին նվիրված վահանակ, որպեսզի այլ դասարանների աշակերտները կարողանան ծանոթանալ դրա հետ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք բոլորս պատասխանատվություն ենք կրում այն բանի համար, որպեսզի մարդու իրավունքները լինեն պաշտպանված և քաջալերված: Չնայած որ պետություններն իրենց վրա պարտավորություն են վերցրել պաշտպանելու մարդու իրավունքները, բազմաթիվ ոչ-կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ-ներ) ակտիվորեն գործում են ամբողջ Եվրոպայում և աշխարհում՝ աջակցելու, զարգացնելու և երաշխավորելու մարդու իրավունքները:

Խնդրեք ձեր աշակերտներին գտնել, թե որ ՈԿԿ-ներն են ակտիվորեն աշխատում այդ բնագավառում ձեր երկրում:

Որո՞նք են դրանց նպատակները: Ինչո՞վ են դրանք զբաղվում: Ովքե՞ր են դրանց անդամները: Գոյություն ունե՞ն, արդյոք, որևէ իրավապաշտպան կազմակերպություններ ձեր տարածաշրջանում: Հնարավո՞ր է, արդյոք, հրավիրել մի իրավապաշտպան ՈԿԿ-ի դասարանում ելույթ ունենալու համար:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ուսումնասիրություն և վերլուծություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Վերլուծեք ձեր երկրի և միջազգային կազմակերպությունների միջև մարդու իրավունքների կապերը:

Երբ աշակերտներն աշխատում են խմբերում, նրանց հանձնարարվում է ուսումնասիրել հետևյալ թեմաները.

- Ե՞րբ և ինչու՞ է ձեր երկիրը միացել Եվրոպայի խորհրդին
- Ե՞րբ է ձեր երկիրը ստորագրել և վավերացրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և ո՞ր արձանագրություններն է այն վավերացրել
- Ո՞րն է հիմնական տարբերությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և ՄԻԵԿ-ի միջև
- Ե՞րբ է ձեր երկիրը ստորագրել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը
- Ե՞րբ և ինչու՞ է ձեր երկիրը միացել Միավորված ազգերի կազմակերպությանը
- Ստորագրե՞լ է արդյոք ձեր երկիրը Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքներին վերաբերող այլ կարևոր փաստաթղթեր
- Ի՞նչ ուրիշ միջազգային պարտավորություններ է ստանձնել ձեր երկիրը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում

ՁԵՐ ԵՐԿԻՐԸ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Որո՞նք են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրառման հետևանքները ձեր երկրում: Երբ մի երկիր վավերացնում է ՄԻԵԿ-ը, ապա դրա հետևանքները հեռուն գնացող են լինում: Այստեղ նույնպես, այդ գործունեությունը աշակերտներից պահանջում է ուսումնասիրել հետևյալ թեմաները.

- Ի՞նչ հաստատությունների վրա է ազդեցություն ունենում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան
- Ո՞ր հաստատություններ են պատասխանատվություն կրում, որպեսզի ձեր երկրում ապահովված լինեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները
- Հնարավո՞ր է արդյոք կազմակերպել դասարանով այցելություն այդ հաստատություններից մեկում
- Ձեր երկրի սահմանադրության ո՞ր դրույթներն են համահունչ Կոնվենցիայում շարադրված իրավունքների հետ
- Ինչպե՞ս է ձեր երկրից Մարդու իրավունքների եվրոպական դատարանում աշխատող դատավորի անունը և ինչպիսի՞ն է նրա մասնագիտական փորձառությունը
- Եղե՞լ են արդյոք գործեր ձեր երկրից, որոնք հասել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եթե՝ այո, ապա ինչպիսի՞ն են եղել արդյունքները
- Ի՞նչ քայլեր է ձեռնարկել ձեր երկիրը կատարելու համար Կոնվենցիայի պահանջները այն բանից հետո, երբ հայտնի է դարձել, որ դրանք խախտվել են

Գոյություն ունեն Եվրոպայի խորհրդի մի շարք այլ կոնվենցիաներ և մեխանիզմներ, որոնք պաշտպանում են մարդկանց իրավունքները: Ի՞նչ կապեր կան ձեր երկրի միջև և

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի
- Եվրոպական սոցիալական խարտիայի
- խոշտանգումներից պաշտպանելու կոնվենցիայի
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի
- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործի ուսումնասիրումը – Աշակերտների սովորած նյութի վերլուծությունը և կիրառումը:

Ժամանակը.

30 րոպե (գործի ուսումնասիրումը կարդալու և հարցին պատասխանելու համար), գումարած 20 րոպե (ուղղումներ, որոնց հնարավոր է որ կհետևի շոշափվող թեմաների քննարկումը):

Մոտեցումը.

աշակերտներին բաժանել փոքր խմբերի (4-5 մարդ): Խնդրել նրանց կարդալ ստորև բերված գործի ուսումնասիրումը, այնուհետև տեղեկատվական թերթիկների օգնությամբ պատասխանել հարցերին: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր խոսնակին իրենց պատասխանների կարճ ներկայացման համար:

Մերի Ուիլյամսը
և նրա կերպարը մամուլում

Մերի Ուիլյամսը համաշխարհային ճանաչում ունեցող դերասանուհի է: 2001թ «Սթար Նյուզ» **ամսագիրը հրապարակեց մի հոդվածաշար, որտեղ քննադատվում էր վերջին կինոնկարում նրա դերասանական խաղը:**

Տկն. Ուիլյամսը ամսագրի դեմ գործ հարուցեց դատարան՝ զրպարտության մեղադրանքով: Նա քննադատության ենթարկեց ինչպես բուն հոդվածները, այնպես էլ ամսագրում տեղադրված իր լուսանկարները, պնդելով, որ դա հանդիսանում է ներխուժում իր անձնական կյանք:

Իր երկրի դատարանները (Եվրոպայի խորհրդի անդամ պետության) որոշում կայացրին, որ հոդվածներն իսկապես էլ զրպարտչական մեկնաբանություններ են պարունակել նրա մասին և տուգանեցին ամսագրին 7000 եվրոյի չափով: Սակայն, միևնույն դատարանները որոշում կայացրին, որ տկն. Ուիլյամսը, լինելով հանրահայտ անձնավորություն, պետք է որ պատրաստ լիներ ընդունելու, որ կիրապարակվեն իր ամենօրյա կյանքը պատկերող լուսանկարներ:

Հարցեր

Մերի Ուիլյամսը ցանկանում է գանգատարկել դատարանի որոշումը լուսանկարների հրապարակման հետ կապված:

Կարո՞ղ է նա արդյոք այդ գործով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվ եթե՝ այո, ապա Կոնվենցիայի ո՞ր հոդված(ներ)ով նա կարող է հիմնավորել իր գանգատը:

«Սթար Նյուզ» **ամսագիրը ցանկանում է գանգատարկել տուգանքի ենթարկվելու որոշումը:**

Կարո՞ղ է այն արդյոք այդ գործով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվ եթե՝ այո, ապա Կոնվենցիայի ո՞ր հոդված(ներ)ով այն կարող է հիմնավորել իր գանգատը:

Գրեք մոտավորապես 20 տող հետևյալ թեմայով.

Գոյություն ունե՞ն արդյոք լրագրողների համար արտահայտվելու ազատության սահմանափակումներ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործի ուսումնասիրումը – Աշակերտների սովորած նյութի վերլուծությունը և կիրառումը:

Ժամանակը.

30 րոպե (գործի ուսումնասիրումը կարդալու և հարցին պատասխանելու համար), գումարած 20 րոպե (ուղղումներ, որոնց հնարավոր է որ կհետևի շոշափվող թեմաների քննարկումը):

Մոտեցումը.

աշակերտներին բաժանել փոքր խմբերի (4-5 մարդ): Խնդրել նրանց կարդալ ստորև բերված գործի ուսումնասիրումը, այնուհետև տեղեկատվական թերթիկների օգնությամբ պատասխանել հարցերին: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր խոսնակին իրենց պատասխանների կարճ ներկայացման համար:

Խաղաղ ցույց

Քաղաքի վերջին կանաչ զբոսայգու տեղը նախատեսվում է կառուցել ավտոկայանատեղի: Տեղի տասը բնակիչներ խաղաղ ցույց են անցկացնում զբոսայգում, հայտարարելով, որ իրենց պետք է հանգստի, իսկ իրենց երեխաներին՝ խաղալու վայր:

Գալիս է ոստիկանությունը և ասում նրանց, որ ցույց անել նրանց չի թույլատրվում և նրանք պետք է գնան տուն: Ցուցարարները նստում են գետնին և հրաժարվում հեռանալ: Ոստիկանությունն ուժով հեռացնում է նրանց՝ վնասվածքներ հասցնելով նրանցից մի քանիսին:

Հարցեր

- Խախտվե՞լ էին արդյոք ցուցարարների հիմնարար իրավունքները: Եթե՝ այո, ապա՝ ո՞ր իրավունքները:
- Կարո՞ղ են արդյոք ցուցարարները համատեղ գանգատ ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նշեք այն պայմանները, որոնք անհրաժեշտ է կատարել գանգատ ներկայացնելու համար:
- Կոնվենցիայի ո՞ր հոդված(ներ)ով նարանք կարող են հիմնավորել իրենց գանգատը:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործի ուսումնասիրումը – Աշակերտների սովորած նյութի վերլուծությունը և կիրառումը:

Ժամանակը.

30 րոպե (գործի ուսումնասիրումը կարդալու և հարցին պատասխանելու համար), գումարած 20 րոպե (ուղղումներ, որոնց հնարավոր է որ կհետևի շոշափվող թեմաների քննարկումը):

Մոտեցումը.

աշակերտներին բաժանել փոքր խմբերի (4-5 մարդ): Խնդրել նրանց կարդալ ստորև բերված գործի ուսումնասիրումը, այնուհետև տեղեկատվական թերթիկների օգնությամբ պատասխանել հարցերին: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր խոսնակին իրենց պատասխանների կարճ ներկայացման համար:

Լորենցոն, *նրա ամուսնալուծությունը և նրա երեխաները*

Լորենցոն 12 տարվա ամուսնությունից հետո դիմել էր ամուսնալուծության համար: Նրա կինը չէր առարկում, բայց դատարանից մի քանի տարի պահանջվեց մինչև ամուսնալուծության որոշում ձևակերպելը:

Լորենցոն ցանկանում էր կապ պահպանել իր երկու երեխաների հետ, բայց այդ երկրի օրենսդրությունը նրան թույլ չէր տալիս անել դա մինչև ամուսնալուծության ավարտը:

Հարցեր

- Կոնվենցիայի ո՞ր հոդվածին կարող էր վկայակոչել Լորենցոն նման իրավիճակը վիճարկելու համար:
- Նկարագրեք Մարդու իրավունքների եվրոպական դատարանում այն գանգատի անցումը տարբեր փուլերով, որը կարող էր որոշել ներկայացնել Լորենցոն:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործի ուսումնասիրումը – Աշակերտների սովորած նյութի վերլուծությունը և կիրառումը:

Ժամանակը.

30 րոպե (գործի ուսումնասիրումը կարդալու և հարցին պատասխանելու համար), գումարած 20 րոպե (ուղղումներ, որոնց հնարավոր է որ կհետևի շոշափվող թեմաների քննարկումը):

Մոտեցումը.

աշակերտներին բաժանել փոքր խմբերի (4-5 մարդ): Խնդրել նրանց կարդալ ստորև բերված գործի ուսումնասիրումը, այնուհետև տեղեկատվական թերթիկների օգնությամբ պատասխանել հարցերին: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր խոսնակին իրենց պատասխանների կարճ ներկայացման համար:

Ռոբերտոն
և կալանքի տակ պահելը

1996թ Ռոբերտոն դատապարտվեց 20 տարվա ազատազրկման մի շարք կողոպուտների և մեքենաների գողության համար: Նրան վեց ամիս պահել էին քննչական մեկուսարանում, նախքան իր պատիժը կրելու համար բանտ տանելը, այն բանից հետո, երբ իր վերջնական ուժի մեջ էր մտել դատարանի վճիռը:

Ռոբերտոն բողոքում էր, որ իրեն քննչական մեկուսարանում պահելն ապօրինի էր: Բացի դրանից, նա քննադատում էր այն պայմանները, որոնցում իրեն պահել էին, քանի որ նա դրանք համարում էր մարդկային արժանապատվությունը նվաստացնող: Նա նաև պնդում էր, որ իր նամակագրությունը բացում և կարդում էին բանտային իշխանությունները նախքան այն իրեն հանձնելը:

Հարցեր

- Խախտվե՞լ էին արդյոք Ռոբերտոյի հիմնարար իրավունքները: Եթե՝ այո, ապա՝ ո՞ր իրավունքները:
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ո՞ր հոդվածները կարող էր վկայակոչել Ռոբերտոն իր վիճակից բողոքելու համար:
- Ինչ չափորոշիչներ կարող էր վկայակոչել Ռոբերտոյի փաստաբանը իր վստահորդին կալանքի տակ պահելու պայմանների կապակցությամբ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործի ուսումնասիրումը – Աշակերտների սովորած նյութի վերլուծությունը և կիրառումը:

Ժամանակը.

30 րոպե (գործի ուսումնասիրումը կարդալու և հարցին պատասխանելու համար), գումարած 20 րոպե (ուղղումներ, որոնց հնարավոր է որ կհետևի շոշափվող թեմաների քննարկումը):

Մոտեցումը.

աշակերտներին բաժանել փոքր խմբերի (4-5 մարդ): Խնդրել նրանց կարդալ ստորև բերված գործի ուսումնասիրումը, այնուհետև տեղեկատվական թերթիկների օգնությամբ պատասխանել հարցերին: Յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր խոսնակին իրենց պատասխանների կարճ ներկայացման համար:

Իվանը և արտաքսված լինելու *հեռանկարը*

Իվանին ոստիկանությունը ձերբակալել էր հարևան երկրում (Եվրոպայի խորհրդի անդամ պետություն): Քանի որ նրա փաստաթղթերը հարկ եղած վիճակում չէին, դատարանները որոշեցին, որ նա պետք է արտաքսվի իր ծագման երկիր:

Իվանը փորձում է գանգատարկել այդ որոշումը: Նա պնդում է, որ ինքը պատկանում է էթնիկ մի փոքրամասանության, որն իր ծագման երկրում ենթարկվում է խտրականության և եթե իրեն վերադարձնեն այնտեղ, ապա ինքը, ամենայն հավանականությամբ կենթարկվի խոշտանգումների,կամ էլ անգամ կսպանվի պետական մարմինների, կամ էլ ապստամբների կողմից:

Հարցեր

- Կարո՞ղ է արդյոք Իվանը բողոք ներկայացնել հարևան երկրի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ իրեն իր ծագման երկիր հետ ուղարկելու որոշման կապակցությամբ: Կոնվենցիայի ո՞ր հոդված(ներ)ով Իվանը կարող է հիմնավորել իր գանգատը:

- Ինչ չափով նա կարող է նաև գանգատ ներկայացնել իր ծագման երկրի դեմ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Գործունեության տեսակը – մտքերի փոխանակություն, քննարկումներ մարդու իրավունքների մասին:

Ժամանակը՝

1-1 ժամ ու կես

Մոտեցումը.

դասարանը բաժանել 5 կամ 6 աշակերներից կազմված խմբերի և կարդալ նրանց հետևյալ սցենարները: Հետո սկսել քննարկումը՝ օգտագործելով ստորև տրված հարցերը:

Երևակայական երկիրը

«Պատկերացրեք, որ դուք հայտնաբերել եք մի նոր երկիր, որտեղ նախկինում ոչ ոք չի ապրել և այնտեղ չկան ոչ օրենքներ ոչ էլ կանոններ: Դուք և ձեր խմբի մյուս անդամները կլինեք այս նոր երկրի առաջին հիմնադիր բնակիչները: Դուք չգիտեք, թե ինչպիսին կլինի ձեր կարգավիճակն այդ նոր երկրում»:

Ամեն մի աշակերտ պետք է անձամբ թղթի վրա գրի երեք իրավունք, որոնք, նրա կարծիքով, պետք է երաշխավորված լինեն բոլորի համար այդ նոր երկրում:

Խնդրեք աշակերտներին փոխանակել այդ թղթերն իրենց խմբում և քննարկել դրանք: Այնուհետև խումբը պետք է համաձայնության գա 10 իրավունքներից բաղկացած ցուցակի շուրջ, որոնք, նրանց կարծիքով, կարևոր են: Դրանից հետո խումբը պետք է մի անվանում մտածի այդ երկրի համար և գրի առնի այն մի մեծ թղթի վրա՝ իրավունքների ցուցակի հետ միասին:

Ամեն մի խումբ իր ցուցակը ներկայացնում է մնացած դասարանին:

Այն ընթացքում, ինչ նրանք դա անում են, դասարանի ցուցակում նշեք յուրաքանչյուր իրավունք. եթե իրավունքները կրկնվում են՝ նրանց կողքը խաչ դրեք: Այն բանից հետո, երբ բոլոր խմբերը կներկայացնեն իրենց գրառումները, խնդրեք դասարանին ընդգծել այն իրավունքները, որոնք համընկնում են կամ հակասում մեկը մյուսին:

- Կարելի՞ է արդյոք նպատակահարմար դարձնել դասարանի ցուցակը: Կարելի՞ է արդյոք համախմբել համանման իրավունքները:
- Որքանո՞ մոտ իրականությանը այդ ցուցակը:

Այնուհետև, հետևյալ թեմաներով կարելի է տալ լրացուցիչ հարցեր:

- Փոխվեցի՞ն արդյոք այս աշխատանքի արդյունքում ձեր պատկերացումները, թե որոնք էին ամենակարևոր իրավունքները
- Կա՞ն արդյոք որևէ այլ իրավունքներ, որոնք դուք կցանկանայիք այժմ ավելացնել ցուցակին
- Համընդհանու՞ր են արդյոք մարդու իրավունքները
- Գոյություն ունե՞ն արդյոք ձեր տարածաշրջանում ակտիվորեն գործող իրավապաշտպան կազմակերպություններ
- Որո՞նք են դրանց նպատակները. Ինչո՞վ են դրանք զբաղվում. Ովքե՞ր են դրանց անդամները

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Վիկտորինա

Ստուգեք ձեր գիտելիքները

1. Երբ է ընդունվել ՄԻԵԿ-ը

- 1948թ
- 1950թ
- 1959թ

2. Քանի՞ դատավոր է ներկայացնում յուրաքանչյուր երկիր

- մեկ
- դա կախված է երկրից
- դա կախված է գործից

3. Ո՞վ կարող է դիմել Դատարան

- Եվրոպական միության քաղաքացիները
- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քաղաքացիները
- ցանկացած մարդ անկախ քաղաքացիությունից

4. Ինչպիսի՞ն են ժամկետային սահմանափակումները Դատարան դիմելու համար այն բանից հետո, երբ սպառվել են ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները

- դատական վերջին որոշումից հետո 6 ամսվա ընթացքում
- գործի փաստերից հետո 10-ը տարվա ընթացքում
- դատական վերջին որոշումից հետո մեկ տարվա ընթացքում

5. Ո՞ր մարմինն է պատասխանատու Դատարանի վճիռների կատարման մոնիտորինգի համար

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը
- Մարդու իրավունքների հանձնակատարը
- Նախարարների կոմիտեն

6. Ո՞ր երկիրը չի ստորագրել և չի վավերացրել ՄԻԵԿ-ը

- Թուրքիան
- Բելառուսը
- Շվեյցարիան

7. Այս թեմաներից որո՞նց վերաբերյալ է Դատարանն արդեն վճիռներ կայացրել

- ազգային պաշտպանության
- քիմիական աղտոտման վտանգի
- կենսաէթիկայի

8. Եվրոպական միության քանի՞ երկրներ չեն հանդիսանում ՄԻԵԿ-ի կողմ

- 0
- 1
- 9

9. Ո՞վ է պատասխանատվություն կրում Կոնվենցիայի խախտման մասին վճռի կատարման համար

- պետությունները
- Նախարարների կոմիտեն
- Դատարանը

10. Քանի՞ տարբեր լեզուներով է կարելի գանգատ ներկայացնել Դատարան

- 2
- 47
- անդամ պետությունների ցանկացած պաշտոնական լեզվով

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Վիկտորինայի հարցերի պատասխանները:

1. 1950թ
2. մեկ դատավոր
3. ցանկացած մարդ, անկախ քաղաքացիությունից
4. դատական վերջին որոշումից հետո 6 ամսվա ընթացքում
5. Նախարարների կոմիտեն
6. Բելառուսը
7. քիմիական աղտոտման վտանգի
8. 0
9. պետությունները
10. անդամ պետությունների ցանկացած պաշտոնական լեզվով

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքները պաշտպանող այլ փաստաթղթեր

Տարիների ընթացքում Եվրոպայի խորհուրդը պատրաստել է մի շարք այլ փաստաթղթեր, որոնք հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորած իրավունքների վրա:

Եվրոպական սոցիալական խարտիա

Եվրոպական սոցիալական խարտիան (1961թ), դրա Լրացուցիչ արձանագրությունը (1988թ) և վերանայված Խարտիան (1996թ) երաշխավորում են մի շարք հիմնարար սոցիալական իրավունքներ: Դրանք հիմնականում վերաբերում են աշխատանքի (օր. խտրականության բացառման, արհմիությունների իրավունքների և սոցիալական ապահովության իրավունքի), աղքատությունից պաշտպանված լինելու և սոցիալական օտարման, ինչպես նաև բնակարանային բարվոք պայմաններ ունենալու իրավունքին:

Եվրոպական կոնվենցիա խոշտանգումների կանխարգելման մասին

1987թ Եվրոպայի խորհուրդն ընդունել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան: Այս Կոնվենցիան լրացնում է այն պաշտպանությունը, որն ապահովվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմից՝ շնորհիվ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի ստեղծման (ԽԿԿ), որը կազմված է անկախ և անկողմնակալ փորձագետներից, ովքեր այցելում են կալանավայրեր ուսումնասիրելու համար, թե ինչպես են վարվում կալանավորների հետ:

Շրջանակային կոնվենցիա ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին

Սա առաջին իրավաբանորեն պարտավորեցնող բազմակողմ փաստաթուղթն է, որն ընդհանուր առմամբ պաշտպանում է ազգային փոքրամասնություններին: Այնտեղ շարադրված են այն սկզբունքները, որոնց պետք է հետևեն այս Կոնվենցիան վավերացրած երկրները: Դրանք ներառում են օրենքի առջև հավասարությունը, միջոցների ձեռնարկումը մշակույթների պահպանման և զարգացման համար և պաշտպանելու համար ինքնությունը, կրոնը, փոքրամասնությունների լեզուներն ու ավանդույթները:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ՌԱԵՀ)

ՌԱԵՀ-ն ստեղծվել է 1993թ ուժեղացնելու համար պայքարը ռասիզմի, այլատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության բոլոր ձևերի դեմ եվրոպական մակարդակով: Հանձնաժողովը գնահատում է այս ոլորտում ազգային և միջազգային քայլերի արդյունավետությունը և խրախուսում դրանց իրականացումը բոլոր մակարդակներում:

Եվրոպայի խորհրդի կոնվենցիա՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին

Այս Կոնվենցիան հանդիսանում է համապարփակ պայմանագիր, որը հիմնականում նվիրված է թրաֆիքինգի զոհերի և նրանց իրավունքների պաշտպանությանը: Այն վերաբերում է նաև մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը և դրանով զբաղվող անձանց հետապնդմանը: Այն կիրառվում է անկախ այն բանից, թե զոհերը կանայք են, տղամարդիկ թե երեխաներ և ինչպիսին էլ որ լինի շահագործումը՝ սեռական շահագործում կամ հարկադիր աշխատանք կամ ծառայություններ և այլն:

www.human-rights-convention.org
www.echr.coe.int
www.coe.int/socialcharter
www.cpt.coe.int
www.coe.int/monitoring
www.coe.int/ECRI
www.coe.int/commissioner

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Design graphique : anne habermacher / PREMS 53213ARM

www.coe.int

www.human-rights-convention.org

Ավելին պարզելու համար այցելեք մարդու իրավունքների հետևյալ վեբկայքերը.

Եվրոպայի խորհուրդ. www.coe.int
Մարդու իրավունքների եվրոպական դատարան. www.echr.coe.int
Դատարանի վճիռների կատարումը. www.coe.int/execution

Ֆեյսբուք. www.facebook.com/pages/Council-of-Europe/42276542714
Թվիթեր. http://twitter.com/councilofeurope
Ֆլիքր. www.flickr.com/people/councilofeurope/

Հունիս 2013